

Ե. ԼԱԼԱՅԱՆԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՄԲԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՍԵՆԵՔԵՐԻՄ ՇԱԼՁՅԱՆ  
(1878–1943 թթ.)

*Ուսուցիչ, բանահավաք, պատմաբան Սենեքերիմ Շալջյանի (1878–1943 թթ.) կենսագրությունը բնորոշ օրինակ է արևմտահայոց այն սակավաթիվ մտավորականների կյանքի ու գործի, որոնք փրկվել են Եղեռնից: Ջգալի է նրա վաստակը հատկապես Ե. Լալայանի բանահյուսական արշավախմբի գործունեության կազմում (1915–1916 թթ.):*

*Եղեռնից փրկված արևմտահայերից Ս. Շալջյանի գրի առած հեքիաթների մի մասը՝ ավելի քան 100 միավոր, գիտական հրատարակությամբ տպագրվել է «Հայ ժողովրդական հեքիաթների» XIII–XVII հատորներում: Նա հրատարակել է նաև հայագիտական հոդվածներ ժամանակի գիտական մամուլում:*

*Վերջինիս թողած ինքնակենսագրությունը ամբողջական պատկերացում է տալիս և՛ նրա ընտանիքի անդամների, և՛ բանահյուսության, մատենագրության ու պատմության հանդեպ տածած սիրո, և՛ ուսուցչական գործունեության, և՛ գաղթի ճանապարհի մասին:*

*Ստորև ներկայացվող Ս. Շալջյանի ինքնակենսագրությունը (պատճեն) պահվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում (FF I : 6021–6034):*

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

ԻՄ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Ծնվել էմ 1878 թ. հունվարի 3-ին (հին տոմարով), Վանի Քաղաքամեջ թաղամասում: Հայրս՝ Հակոբը՝ արհեստով ջուլհակ (շալջի<sup>2</sup>)\* էր, այդ արհեստին հետևեցին ինձնից փոքր երկու եղբայրներս, մասամբ նաև ես:*

<sup>1</sup> «ՄՄՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի տեղեկագիր», 1941., -2, էջ 78–88, 1941, - 5–6, էջ 107–115, 1942, - 1–2, էջ 31–34, -3–4, էջ 37–42:

<sup>2</sup> Այստեղից էլ ծագում է մեր Շալջյան ազգանունը (ծան. Ս. Շ.):

Ինձնից մեծ քրոջս ամուսնությունից հետո մեր ընտանիքը բաղկացած էր 5 շնչից (ծնողներս և մենք եղբայրներս): Շալջիության արհեստը բանուկ էր Վանում, և շնորհիվ դրան մենք ունեինք բարեկեցիկ վիճակ, թե հորս ողջության և թե նրա մահից հետո:

Հայրս ուսումնասեր մարդ էր և հոգում էր իր զավակների կրթության մասին: Ութ տարեկան հասակում դպրոց եմ մտել և միջնակարգ ուսումն ավարտել եմ 1896 թ. (ինձ հետ միասին ավարտեց նաև ինձնից մի տարով փոքր Արամ եղբայրս):

Միջնակարգի 4-5 տարիներում մեր խումբը դպրոցի (Հիսուսյան-Շուշանյան) ամենաբարձր խումբն էր. այդ ժամանակաշրջանում մեր գլխավոր դասատուներն էին՝ առաջին, դպրոցի վարիչ, բնագիտության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, աշխարհագրության և ֆրանսերենի դասատու Եղիշե Դունդակյան (Փորթուզայանի Վանում բացած վարժապետարանի փայլուն շրջանավարտներից մեկը) և երկրորդը՝ հայոց լեզվի, կրոնի, պատմության դասատու Հովհաննես Կուլոլյան-Մկրտչյան (ինքնաշխատությամբ ոչ պակաս զարգացած):

Այս երկու անձնավորություններիցն էլ ես ստացել եմ իմ հիմնական կրթությունը:

Դպրոցն ավարտելուց անմիջապես հետո, 1896-97 ուսումնական տարում ես մտա էլի նույն դպրոց, որպես դասատու: Տեղի էր ունեցել 96-ի հունիսյան Վանի (առաջին) կոտորածը և շուկաների թալանումը, որով և առաջացած տնտեսական կրիզիսի հետևանքով մեր դպրոցը վերածվեց տարրական կամ 6-ամյակի մոտ մի ուսումնարանի:

Ուսուցչական պաշտոնի մեջ մնացի մինչև 1901 թիվը, որից հետո երեք տարի հետևել եմ ջուլիակության արհեստին: 1904-1905 ուս. տարում նորից անցա ուսուցչության՝ շարունակելով այդ աշխատանքը մինչև 1915 թվի ապրիլյան կռիվները, կռիվներից հետո մինչև Վասպուրականի գաղթը դեպի Ռուսաստան, մոտ մեկ ամիս, աշխատում էի մեր քաղաքամասում կազմված միլիցիայի վարչության մեջ, որպես գործավար:

Այստեղ ընդհատելով կենսագրությանս շարունակությունը անցնում եմ այն խնդրին, թե գիտության ո՞ր ճյուղն է ամենից ավելի հետաքրքրել ինձ:

Դեռ ուսումնական շրջանից ես հակում էի ցույց տալիս դեպի պատմության առարկան, կարդացել էի մեր հին պատմագիրներից շատերը, դպրոցն ավարտելուց հետո և ուսուցչության անցնելուց հետո, ես գնեցի մեր պատմական մատենագիրների գրեթե մեծամասնությունը:

Դժվար էր սակայն պատմագրության վերաբերյալ բոլոր աշխատությունները ձեռք բերել և խորանալ այդ առարկայի մեջ, որովհետև տիրող պետական

ռեժիմը հայ պատմական գրքեր ունեցողին համարում էր վտանգավոր մարդ և տարիներով բանտ էր նստեցնում նրան:

Մի ժամանակ՝ շնորհիվ համեմատաբար ոչ խիստ քաղաքականության, սկսվեց Պոլսի գրավավաճառանոցներում ծախվել արտասահմանի հայ հրատարակությունները, որով էս ավելի հնարավորություն ունեցա ծանոթանալու հայագիտության վերաբերյալ բանասիրական գրականության հետ:

Սեպագրական Վանյան պատմության հետ ծանոթացել եմ առաջին անգամ Պալասանյանի հայոց պատմության դասագրքի միջոցով, հետո կարդացել եմ «Արաքս» հանդեսի մեջ հրատարակված Լընտրմանի (թե Մաքս Մյուլլերի) Ուրարդական պատմության վերաբերող մի բավական ընդարձակ հոդված:

Այս ընթերցումներից հետո, էս սկսեցի հետաքրքրվել մեր քաղաքում եղած արդեն հայտնի սեպագիր արձանագրություններով, և դրանից դուրս նորերը փնտրելով: Եվ իրոք ինձ հաջողվեց մինչ այդ անհայտ մնացած երկու արձանագրեր ևս հայտնաբերել: Դրանից մինը սուրբ Վարդան եկեղեցու դռան շեմքարն էր, իսկ մյուսը Թերզիբաշյանների դռան դեմ եղած ձի հեծնելու պատվանդան քարը:

Երբ Բելք<sup>3</sup> ու Լեման<sup>4</sup> Վան եկան, էս նրանց ցույց տվի այդ քարերը, որոնք և վերցրին նրանց վրայի արձանագրությունները:

Վանի Քաղաքամեջ թաղամասը շրջապատող հարավային պարիսպների «Վալատ Կուլասի» կոչված աշտարակի ստորոտը մի ժամանակ ընկած էր երեք քառորդ մետր երկարությամբ, կես մետր լայնությամբ ու նույնքան բարձրությամբ մի քարե արձանի իրանը, որի գլուխը, ոտները և թները ջարդված էին:

Այդ արձանը վերջեն փոխադրվեց բերդ, որպես նրան պատկանյալ գույք: Արձանի հետևը թիկունքի վրա մնացած մագերի գանգուրները, ինչպես նաև կուրծքի կողմից երևացող սրի գլուխը, նրա երախակալը և ձեռքը, որը բռնել է սուրը, ամբողջովին հաստատում են, որ արձանը Ասորեստանական է, և ոչ թե Վանյան ստեղծագործություն, ինչպես կարծում է Լեոն (տե՛ս Լեոի «Հայոց պատմության» էջ 301):

Այդ արձանը էս համարում եմ Թեկլաթ պելասար Գ-ին, որը 736 թվին պաշարեց Վանը, և տեսնելով որ չի կարող գրավել, իր արձանը կանգնեցնում է քաղաքի դեմ ու հեռանում է (տե՛ս Լեոի պատ., էջ 284):

Ազգագրական նյութի հետ էս համեմատաբար ուշ եմ ծանոթացել և ուշ էլ սկսել եմ հավաքումներս: Սկզբնական շրջանում այդ աշխատությունս կատարվում էր անսխտեմ կերպով, բայց երբ այդ ուղղությամբ էս խորհուրդ

<sup>3</sup> Վ. Բելք (1862–1932) – գերմանացի հնագետ:

<sup>4</sup> Հ. Լեման (1861–1938) – գերմանացի հնագետ:

հարցրի իմ պատմության դասատու Հովհաննես Կուլոյյանին, նա ինձ տրամադրեց իր ունեցած Գ. Խալաթյանի «Ազգագրական նյութերի հավաքման ծրագիրը»:

Այդ ձեռնարկը լայն հնարավորություն տվեց ինձ իմ հավաքածուն ընդարձակելու և սիստեմի վերածելու գործում: Մակայն չկարողացա օգտագործել նրա Բ (հրավաքանական) մասը, համապատասխան նյութեր չգտնելու և իմ ուժերից բարձր լինելու պատճառով:

1908 թ-ում սահմանադրությունից հետո մեզ մոտ կազմված գրադարանների Էմինյան և ազգագրական հանդեսների հավաքածուները ավելի ևս միջոցներ հայթայթեցին ինձ իմ աշխատությունը ստվարացնելու: Այդ օրերին հավաքածու կազմում էր մոտ 500 էրես, հետևյալ բաժիններով. 1) հավատք սովորության, 2) աղոթքներ, 3) պարերգեր, 4) կենցաղային երգեր, 5) աշխատանքային երգեր, 6) առակ-անեկդոտներ, 7) ասույթներ, 8) ավանդություններ այս ու այն տեղերի մասին, 9) ձևեռնային երեխաների ժամանցներ, 10) հոգեվոխական հեքիաթներ:

Ես ուրիշ տիպի հեքիաթ չէի հավաքում: Տիգրան Չեթունին հավաքում էր հայկական վեպ:

Այս աշխատությունը տեսել էր Էջմիածնի ձեմարանավարտ ուսուցիչ Արտակ<sup>5</sup> Դարբինյանը, որի թելադրանքով էս մի ծաղկաքաղ կատարեցի հավաքածուից և հանձնեցի նրան:

Արտակն այդ ծաղկաքաղը ուղարկեց Էջմիածին՝ հայ գրերի գյուտի և հայ սուպագրության հորեյանի առթիվ հրատարակվելիք մի ինչ որ հավաքածուի մեջ մտցնելու համար:

Այդ գործը գլուխ չեկավ սակայն, իսկ ծաղկաքաղի վիճակով նրանից հետո բնավ չեմ հետաքրքրվել, մի գուցե դա ճարվի Էջմիածնի թանգարանում:

Երբ Լալայանը Վան եկավ, ուզեց գնել իմ հավաքածուն, սակայն չծախեցի՝ ցանկալով առանձին գրքով հրատարակել տալ:

Դժբախտաբար 1915 թվի ապրիլյան կոհիվների առաջին իսկ օրին թյուրքերն այրեցին մեր տունը, որի հետևանքով այրվեց նաև իմ ամբողջ գրադարանը և վերոհիշյալ հավաքածուն:

Ձեռագրերի հիշատկարաններ չեմ հավաքել, առաջինը՝ որովհետև մեր եկեղեցիների ձեռագրերի հիշատակարաններ բոլորն էլ արտագրված էին Ղ. վարդապետ Փիրդալամյանի կողմից, երկրորդ, որ եկեղեցիների թաղային խորհուրդները տարին հազիվ մի երկու անգամ այդ ձեռագրերը դուրս էին բերում երկաթապատ արկղներից, այն էլ միայն մի քանի ժամով, չորացնելու և

<sup>5</sup> Ընդգծումը՝ Ս. Շալջյանի (Ա. Ղ.):

վերացուցակագրելու համար, որով հնարավորություն չէր լինում երկար ժամանակ] ունենալ արտագրման համար:


Փիրդալամյանի վերոհիշյալ հավաքածուն իր մեջ պարունակում էր նաև Մշի և Բիթլիզի շրջանի հայ գրչագրերի հիշատակարաններ: Այս բոլորը կազմել էին 4 մատ բարձրությամբ. 30.20 սանդիմ ծավալով մի մեծ հատոր:

Քրտնաջան վարդապետը այս հավաքածուների հիման վրա կազմել էր մի ուրիշ աշխատություն՝ 5 հատորանոց-պատմական դեպքերի քրոնիկոն, մաքուրի քաշված և կազմված Մանչեստրում:

Թե հիշատակարանների հավաքածուն, և թե քրոնիկոնը գնեց գրավաճառ և հնագիտական նյութերով հետաքրքրվող Խաչիկ Լևոնյանը:

Ես գնել էի մի ձեռագիր բժշկական 4-500 տարվա հնություն[ն,] մի տոնացույց և մի երգարան՝ 300-ական տարվա հնությամբ ձեռագրեր: Երգարանի մեջ կար Նահապետ Քուչակի, Նաղաշ Հովնաթանի ձայնագրված երգերից դուրս, մինչ այդ ինձ անձանոթ Հալաջ-օղլու և ուրիշ աշուղների բավական գողտրիկ ստեղծագործություններ:

Հայտատերի ծագման և հայինագրական նյութերով հետաքրքրվելի իմ ուշադրություն գրավեց ս. Վարդան եկեղեցվո մի ձեռագիր, մագաղաթյա ավետարանում<sup>6</sup> (գրողը՝ Վանենիա՝ դուստր Ջաջոույի իշխանի ամուսին Գագկա Արծրունու) վանական վարդապետի ձեռքով գրված հիշատակարանում «եվ» տառի կազմության նախնական շրջանը «ել» ձևով:

Բ. (Վանի պարիսպներից դուրս գտնվող չայիր կոչված հին գերեզմանոցի մի տապանաքարի վրա եղած «խաչս» բառի «Չ» տառը, որը սովորական ձևից ավելի շեղակի էր փորագրված և բերանը բաց և ուներ հետևյալ ձևը «»: Թիֆլիս գալուց և ռուսական տառերին ծանոթանալուց հետո, ես գտա հայերեն և ռուսերեն փոքրատառ «չ» և «չ» տառերի, ինչպես նաև հայերեն մեծատառ «Չ» տառի շրջած ձևի և ռուսական մեծատառ «Ч» տառի մեջ եղած ուշագրավ նմանությունը: Այս մասին ես ժամանակին խոսել եմ Լալայանի հետ:

Վիմական արձանագրություններից արտագրել եմ միայն մեկը, Վանի՝ Խոսրովիա (Կուռչունց) մզկիթի բակում գտնվածը: Երբ Բելքն այդ քարը շրջեց, տակի երեսի վրա երևաց սեպագրի վրա գրված մի հայերեն արձանագրություն: Ապրիլյան կոնիվներից հետո՝ Վանի առաջնորդ Եզնիկ Ներկարարյանը այդ քարը տեղահան արեց, ես արտագրեցի արձանագրությունը:

1916 թ. հունվարին Թիֆլիսում ի ներկայության հիշյալ Եզնիկ վարդապետի՝ Լալայանին հանձնեցի այդ արձանագրությունը, որն ինչքան հիշում եմ, մի Ներսես կաթողիկոսի մահարձանը լինելու էր:

<sup>6</sup> Կարծեմ այս ձեռագիրն այժմ գտնվում է Էջմիածնում (ծան. Ս. Շ.):

1915 թ. ապրիլյան կռիվներից հետո շուտով տեղի ունեցավ Վանի գաղթը և ես իմ ընտանիքով փոխադրվեցի Ռուսաստան, ուր էջմիածնում մեռավ մայրս (Աննան), իսկ Երևանում՝ փոքր եղբայրս, Տիգրանը, և ես կնոջս ու Արամ եղբորս<sup>7</sup> աղջկա հետ փոխադրվեցի Թիֆլիս:

Մի քանի օրից հետո, կարծեմ սեպտեմբերի սկզբներին, մտա ազգագրական ընկերության կազմած արշավախմբի մեջ, ուր և մնացի մինչև 1915 թ. վերջը:

Այդ խմբին մասնակցում էին ինձնից դուրս Նազարեթ Մարտիրոսյանը (մշեցի), այժմս ապրում է Երևանում, Արտաշես Բարսեղյան (Վանի Նարեկ գյուղացի, ուսուցիչ), լավ ծանոթ Հայաստանի հին և նոր աշխարհագրության (մեռավ 192 . թ.), Երվանդ Բեգազյան՝ ուսանող Վանի վարժապետանոցի:

Մեր խումբը մոտ 16 օր Թիֆլիսում մնաց և զբաղվեց հեքիաթ հավաքելով: Հոկտեմբերի սկզբներին խումբը ճանապարհ ընկավ դեպի Հայաստան: Առաջին անգամ կանգ առավ Ախտալա կայարանում և գյուղերում, այնտեղ գտնվող մշեցի գաղթականներից հեքիաթ հավաքելու:

Ախտալայից անցանք Փամբակի Ղարաքիլիսե, այնտեղից Ալեքսոլ (հոկտեմբերի 2-րդ կեսին)<sup>8</sup>: Ալեքսոլից խումբը դեկտեմբերի սկզբներին փոխադրվեց Երևան [Ղարաքիլիսայից մեզ հետ ընկերակցող Մարտիրոս Դաբադյանը (Վեսպեր) հիվանդանալուց զգուշանալով, ետ դարձավ Ղարաքիլիսա]:

Արշավախումբը Երևանում մնաց և էջմիածնում մնաց մինչև դեկտեմբերի վերջը: Էջմիածնում Երվանդ Բեգազյանը մեռավ վարակվելով բժավոր տիֆով: Դեկտեմբերի 31-ին վերջացավ էքսպեդիցիան ու ես վերադարձա Թիֆլիս:

Հեքիաթների հնչյունաբանության համար մենք որոշ սիստեմ չունեինք, հիշում եմ, որ ես վանեցու Ա-ի համար գործածում էի ֆրանսերեն ձայնանիշ՝ աքսան-սիրքոնֆլեքս ( ^ ), յե հնչյունի համար դնում էի շեշտ (ե´), գործադրում էի նաև եօ կամ եօ ձևերը: Իսկ բ, գ, դ, թ, ք և փ հնչյունների համար մենք հետևում էինք առավելապես հնչյունաբանության: Բրբն առաջնորդ ձեռնարկ ունեինք Աճառյանի «Հայ բարբառախումբ» անունով աշխատությունը:

Պատահում էր երբեմն, որ հեքիաթ ասող չէր լինում, այն ժամանակ ես գրում էի Վանի ազգագրական նյութերից այն, ինչ հնարավոր էր հիշողությամբ վերարտադրել, երգեր, պարերգեր, աղոթքներ, հավատք, սովորությունք,

<sup>7</sup> Արամը 1914 թ. օգոստոսին գորահավաքի ենթարկվելով հիվանդացավ, մեռավ հոկտեմբերին (ծան. Ս. Շ.):

<sup>8</sup> Հոկտեմբերի 15-ին Թիֆլիսում ծնվեց իմ Արշավիր տղան, որը Լալայանի առաջարկությամբ ի հիշատակ մեր արշավախմբի կոչվեց Արշավիր: Մկրտությունը կատարվեց հունվարին (1916 թ.) Հ. Ազգագրական ընկ. դահլիճում, կնքահայրությամբ Ե. Լալայանի (ծան. Ս. Շ.):

առակ-անեկդոտներ: Այս բոլորը ես հանձնում էի Լալայանին: Թե ինչ է արել Լալայանը իմ այդ գրվածքները, ես չեմ իմանում, միայն գիտեմ, որ Ազգագրական հանդիսի ... (համարում Վասպուրականի հավատքի նյութերի մեծամասնությունը իմ ձեռագրից է վերցված:

Իրեն համար կարևոր մասերն վերցնելուց հետո՝ Լալայանը իմ ձեռագրի (հավատք, սովորույթ) մնացած մասը խազմզում էր իբրև այլևս անպետք գործի: Այս վարմունքը նա կատարել է ինձնից գաղտնի, սրա մասին ինձ հայտնել է արշավախմբի անդամ Արտաշես Բարսեղյանը:

1916 թ. Թիֆլիս վերադառնալուց հետո մի ժամանակ ես անհատաբար հեքիաթներ հավաքեցի և հանձնեցի Լալայանին, հետո մտա Թիֆլիսի կանանց կոմիտեի գաղթ. որբանոցի մեջ իբրև ուսուցիչ:

Նույն օրերին, ապրիլից սկսած՝ Թիֆլիսում հրատարակվող «Վան-Տոսպ» շաբաթաթերթում ես սկսեցի պարբերաբար գրել Վանի քաղաքամեջ մասում 1915 թ. ապրիլյան կռիվների պատմության վերաբերյալ բավական ընդարձակ հոդվածաշարք:

1917–18 ուստարում տեղափոխվեցի Սանահին և ապա Ջալալօղլի գաղթականական դպրոցներում նույն պաշտոնով:

1919-ի գարնանը Ջալալօղլուց փախա Թիֆլիս, ամեն ինչ Ջալալօղլում թուրքերին թողնելով:

Այստեղ շնորհիվ տիրող տնտեսական ծանր պայմաններին, դպրոցների բացումն ուշանում էր, որով ես պարտավորված ընտանիքիս ապրուստը ճարելու համար, մտա ամերիկյան փողերով պահվող մի ջուլիականոց, որպես ջուլիակ-բանվոր:

1920 թ. սկզբներին ջուլիականոցը փակվեց և ես ընտանիքով փոխադրվեցի Ալեքսպոլ և մտա Ամերկումի արհեստանոցներից մեկի մեջ, որպես հաշվետար քաղաքում և Կազաչի պոստում. այնտեղ փոխադրվեցի Պոլիգոն, որպես վարիչ դպրոց-արհեստանոցի: Վրա հասավ Կարսի անկումը և ես պարտավորված էլի փախուստի դիմեցի ընտանիքովս<sup>9</sup> մեծ նեղություններ կրելով հասա Դիլիջան, այնտեղից Նոյեմբերյան հեղափոխության օրերին Երևան եկա: Մի քանի օր այնտեղ ապրելուց հետո ուղարկվեցի Ներքին Ղամարլուի դպրոցի դասատու: Վրա հասնող Փետրվարյան ավանտյուրայի շնորհիվ դպրոցական աշխատանքներ չկային, ես բոլշևիկների հեռանալուց հետո եկա Երևան, և ավանտյուրայի լիկվիդացիայից վերջ մտա քաղաքի մի դպրոցում որպես ուսուցիչ (միաժամանակ և մի արհեստանոցում ջուլիակություն էի անում):

<sup>9</sup> Անընդհատ տեղափոխությունների, փախուստների և քաղաքից կտրվածության հետևանքով, ես գաղթից հետո հնարավորություն չեմ ունեցել իմ նախասիրած առարկաներով կանոնավորապես պարապելու (ծան. Ս. Շ.):

Երբ թյուրքերը հեռացան Ալեքսանդրից՝ նորից ընտանիքովս տեղափոխվեցի այնտեղ և Ամերիկոմում անցա որպես հաշվային աշխատակցի և մինչև 1924 թ. սեպտեմբերն այնտեղ մնալուց հետո իմ կամքով հեռացա և Լուսաթմնի կարգադրությամբ գնացի Թալինի շրջան ուսուցչական պաշտոնի:

Մի քանի օրով Ահագչի և Գյոզլի գյուղերում աշխատելուց հետո, շրջգործկոմի կարգադրությամբ փոխադրվեցի Թալին, դպրոցի վարիչի պաշտոնով:

Երկու տարուց հետո անցա Ջարինջա, հետո Ն. Արթիկ և Ջիթհանքով գյուղերը:

Թալինում իմ ընտանիքն ապրեց 4 տարի, որի շնորհիվ ես բավական լավ ծանոթացա այդ բնակավայրին և նրա ժողովրդին (տե՛ս իմ տեղեկությունները)\*:

Թալինում ես հանդիպեցի ընկ. Աշխարբեգ Քալանթարյանին և նրա հետ միասին գնացինք Ջարինջի ձորում եղած այժանկարները տեսնելու (տե՛ս իմ Թալինի մասին տեղեկությունները)\*\*:

1931 թ. ապրիլ-մայիսին ես բուղդաշենցի Բայրախտարցոց Ռուբենի տնից վերցրի քարհատական աշխատանքների ժամանակ հին գերեզմանից գտած փոքրիկ հողե հնադարյան մի ջրի աման, և հանձնեցի Հնության պահպանության Կոմիտեի շրջանային ներկայացուցիչ ընկ. Միսակ Ղուկասյանին, որն իր հավաքած մյուս բեկորների հետ Երևան տեղափոխեց:

1931 թ. օգոստոսից ապրում եմ Երևանում. այժմս աշխատում եմ որպես հաշվետար:

Սենեքերիմ Շալջյան  
1933 թ. ապրիլ 15 – մայիս 1  
Երևան